ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
ՍԱՐԳԻՍ ՄԱՆՎԵԼԻ ԲԱԼԴԱՐՅԱՆԻՑ
ՀԱՍՑԵ՝ ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, ՇԵՎՉԵՆԿՈՅԻ 4, ԲՆ.32
ԷԼ. ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵ՝ sargis.baldaryan@gmail.com
ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ՝ +37477509930

# Դ Ի Մ ՈՒ Մ

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

2012 թվականին գերազանցությամբ ավարտել եմ Երևանի թիվ 144 դպրոցը և պետպատվերի շրջանակներում ընդունվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի բակալավրիատ՝ ստանալով պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունք: 2016 թվականին գերազանցությամբ ավարտելով ԵՊՀ պատմության ֆակուլտետի բակալավրիատը՝ դարձյալ պետպատվերի շրջանակներում ընդունվել եմ նույն ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի մագիստրատուրան և կրկին ստացել տարկետման իրավունք:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 796-Ա որոշմամբ ինձ կրկին տրվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունք՝ ասպիրանտուրայի կրթական ծրագրով սովորելու համար: 2020 թվականի հուլիսի 24-ին ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմություն - 004 մասնագիտական խորհրդում պաշտպանել եմ թեկնածուական ատենախոսություն՝ «Հայկական վաճառականական ձեռնարկները Նոր Ջուղայի առևտրական ցանցում» թեմայով: Ատենախոսությունը հաստատվել է, և ՀՀ ԲՈԿ-ի նախագահի 2020 թվականի օգոստոսի 24-ի թիվ 13Ա-վ1 հրամանով ինձ շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ քննարկել ինձ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին սույն դիմումը՝ «Քաղաքացուն բացառիկ դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն որոշման համաձայն, քանի որ ըստ նշված որոշման հավելվածի երկրորդ կետի երրորդ ենթակետի՝ քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու բացառիկ դեպքերի շարքում է «գիտական աստիճան ունեցող քաղաքացուն կրթության և գիտության բնագավառներում գործունեության համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախկինում տարկետում տրված լինելու և քաղաքացու կողմից

Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված գիտական և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվելու հանգամանքները»:

Կից ներկայացնում եմ սույն դիմումում նշված հանգամանքները հավաստող անհրաժեշտ փաստաթղթերը՝

1. Գիտական աստիճանի վկայագրի պատճենը,
2. Ասպիրանտուրայում ուսանելու համար ինձ տարկետման իրավունք տրամադրելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 796-Ա որոշումը՝ կից հավելվածներով,
3. Գիտական գործունեության վերաբերյալ փաստաթղթեր՝
    - Գիտական դրամաշնորհային ծրագրի ղեկավար լինելու մասին տեղեկանք՝ տրված ՀՀ ԳԱ ակադեմիայի կազմում գործող Հայագիտական ուսումնասի-րությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամից,
    - Մաշտոցի անվան Մատենադարանում ավագ գիտաշխատող աշխատելու մասին տեղեկանք,
    - Գիտական հրապարակումների ցանկ,
    - ՀՀ սահմաններից դուրս տեղի ունեցած երկու միջազգային գիտաժողովների (ԱՄՆ, Հունգարիա) մասնակցությունը փաստող նյութեր,
    - ՀՀ սահմաններից դուրս (Իտալիա, Մեծ Բրիտանիա) կատարված գիտահետազոտական գործունեությունը փաստող նյութեր,
    - Հրատարակված մենագրության 1 օրինակ:

Դիմումիս կից ներկայացնում եմ նաև՝

1. Մանկավարժական գործունեության մասին տեղեկանք՝ տրված «Այբ» դպրոցի կողմից,
2. Ինքնակենսագրություն (CV),
3. Նույնականացման քարտի պատճենը:
4. Կցագրման վկայականի պատճենը:

Դիմող՝ Սարգիս Բաղդարյան

14.09.2020 թ.